# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 2

**«ՀՀ ԷԲՊՆ-2016-ԾՀԱՊՁԲ-15/8» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան

23.02.2016թ.
ժամը՝ 10:00

**Մասնակցում էին՝**

**Հանձնաժողովի նախագահ՝**

_Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)_
աշխատակազմի ղեկավարի տեղակալ Էդ. Շախկյան:

**Անդամներ՝**

_Գնման Պատասխանատու/Բացման աշխատակազմ(ԳՊ/ԲԱ)_
աշխատակազմի համակարգչային տեխնիկայի բաժնի պետ Հ.Մելքոնյան:
աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ՝ Ն. Հակոբյան:
_Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ(ԳՊ/ԳԱ)_
աշխատակազմի հաշվապահական հաշվառման գլխավոր մասնագետ Ա. Բաբուջյան:
աշխատակազմի քարտուղարության առաջատար մասնագետ՝ Ա.Ջուլհակյան:

**Հանձնաժողովի քարտուղար՝**

_Գնման Պատասխանատու/Մրցույթի Համակարգող(ԳՊ/ՄՀ)_
աշխատակազմի հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ՝ Լ. Ադոնց:

Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման առարկաների /1-5 չափաբաժինների/ ընդհանուր գինը՝ մեկ թվով արտահայտված:

**1. Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին**

«ՀՀ ԷԲՊՆ-2016-ԾՀԱՊՁԲ-15/8» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերը էլեկտրոնային armeps.am համակարգի միջոցով բացվել են ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության շենքում, ք. Երևան, կառավար. տուն, մասն. 2 հասցեում, փետրվարի 23-ին ժամը 10:00-ին:

**2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները /անունները/ և գտնվելու վայրերի հասցեները.**

| N/N | Մասնակցի անվանումը | Կազմակերպության հասցեն |
|---|---|---|
| 1 | <<Սմարթլայն>> ՍՊԸ | ssmartline@mail.ru |
| 2 | <<Պատրոն ՌՄ>> ՍՊԸ | corp@patron.am |

**3. Տվյալներ՝ ներկայացված հայտերը ԳՊ/ԲԱ-ի կողմից սահմանված կարգի պահանջներին համապատասխան բացելու մասին.**

3. «Սմարթլայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը բացվել է, քանի որ ընդունվել էր համակարգի կողմից և ճանաչվել անցողիկ:

3.2 «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը բացվել է, քանի որ ընդունվել էր համակարգի կողմից և ճանաչվել անցողիկ:

**4. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին .**

4.1 «ՀՀ ԷԲՊՆ-2016-ՇՀԱՊՁԲ-15/8» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով «Սմարթլայն» ՍՊԸ-ի և «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են հետևյալ փաստաթղթերը.

**1) Պիտանելիության չափորոշիչ՝**

ա) դիմում ՇՀ միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու մասին (Հավելված 1)

բ) հայտարարություն ՇՀ միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին (Հավելված 2):

**2) Տեխնիկական չափորոշիչ՝**

ա) հայտարարություն մասնագիտական փորձառության մասին (Հավելված 3.1)

բ) հայտարարություն տեխնիկական միջոցների մասին (Հավելված 3.2)

գ) հայտարարություն ֆինանսական միջոցների մասին (Հավելված 3.3)

դ) հայտարարություն աշխատանքային ռեսուրսների մասին (Հավելված 3.4)

ե) հայտարարություն առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ (Հավելված 4.1)

**3) Ֆինանսական չափորոշիչ՝** գնային առաջարկ (Հավելված 4):

«Սմարթլայն» ՍՊԸ-ի և «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

**5. Մասնակիցների առաջարկած գները.**

Մասնակիցների կողմից գնային առաջարկները կցվում է հավելվածով (1 թերթ):

**6. Տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.**

Բանակցություններ չեն վարվել:

**7. Հանձնաժողովը որոշեց՝**

**1) 1.** Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 46-րդ կետը՝

ա) «Սմարթլայն» ՍՊԸ-ի և «Պատրոն ՊՄ» ՍՊԸ-ի հայտերը գնահատել բավարար:

**2.** Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետը, ՀՀ կառավարության 2011թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետը՝

ա) 1, 2, 3, 4 չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Սմարթլայն» ՍՊԸ-ին, 2-րդ տեղ «Պատրոն ՊՄ» ՍՊԸ-ին:

բ) 5-րդ չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Պատրոն ՊՄ» ՍՊԸ-ին, 2-րդ տեղ «Սմարթլայն» ՍՊԸ-ին:

**3.** Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերը

ա)Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնել առաջին և հաջորդ տեղ զբաղեցրած մասնակիցների Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

բ) ծանուցել «Սմարթլայն» ՍՊԸ-ին և «Պատրոն ՊՄ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով ներկայացնել հրավերով նախատեսված՝ առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը:

**Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները**

| | | |
|---|---|---|
| **Հանձնաժողովի նախագահ՝** | **Էդ. Շախկյան** | ............... |
| **Հանձնաժողովի անդամներ՝** | **Հ. Մելիքյան** | ............... |
| | **Ն. Հակոբյան** | ............... |
| | **Ա. Բաբուջյան** | ............... |
| | **Ա. Զուլհակյան** | ............... |
| **Քարտուղար՝** | **Լ. Ադոնց** | ............... |

Հավելված

ՀՀ ԷԲՊՆ-2016-ՇՀԱՊՁԲ-15/8 ծածկագրով ՇՀ ընթացակարգի միջոցով մասնակիցների կողմից գնային առաջարկներ

ԱԱՀ-ով

| N | Մասնակից կազմակերպությունների անվանումը | Չափաբաժին 1 | Չափաբաժին 2 | Չափաբաժին 3 | Չափաբաժին 4 | Չափաբաժին 5 |
|---|---|---|---|---|---|---|
| | | Քարթրիջ Canon 303 | Քարթրիջ Canon FX 10 | Քարթրիջ HP CE 285A | Քարթրիջ HP C7115A | ֆլեշ հիշողություն, 8GB |
| 1 | <<Սմարթլայն>> ՍՊԸ | 294000 | 100800 | 154800 | 53600 | 19200 |
| 2 | <<Պատրոն ՌՄ>> ՍՊԸ | 311400 | 123840 | 191880 | 85860 | 12780 |